

<<ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ, ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 7 ՄՍՈՒՐ -ՄԱԼԿԱՊԱՐՏԵԶ >> ՀՎԱԿ

Հետազոտության թեման`

«Բարեկիրթ վարվելաձևի ձեռքբերման մանկավարժական պայմանները
նախադպրոցական տարիքում»

Հեղինակ` Ռոզա Բարսեղյան

Մենթոր` Ք.Ասմարյան

2022

Բովանդակություն

Ներածություն -----	3
Գլուխ 1	
Խորհուրդներ, որոնք կօգնեն ծնողներին և մանկավարժներին երեխաների մոտ քարեկիրթ վարվելաձևի հղկմանը -----	4
Գլուխ 2	
Մանկավարժական վարպետության բաղադրիչները քարեկիրթ վարվելաձևի ձեռքբերման համար -----	8
Հետազոտական մաս -----	14
Եզրակացություն-----	16
Օգտագործված գրականության ցանկ -----	17

Ներածություն

Էթիկետ (ֆրանսերեն Etiquette բառից - նշանակում է «պիտակ», «քարտ»), վարքաձևի, վարվելակերպի կանոնների ամբողջություն, կանոններ, որոնք արտահայտվում են մարդկային փոխհարաբերություններում (վերաբերմունքը միմյանց նկատմամբ, դիմելաձևերը, հասարակական վայրերում վարվելակերպը և այլն): Բարեկրթությունն ու քաղաքավարությունը հարգանքի դրսևորում են ոչ միայն շրջապատի, այլև սեփական անձի նկատմամբ: Բարեկիրթ վարվելաձևը երեխաների մոտ պետք է ձևավորել շատ վաղ հասակից: Երեխաների մոտ բարեկիրթ վարք ձևավորելու լավագույն տարբերակը նրանց համար օրինակ ծառայելն է: Եթե դաստիարակված մարդ էք, Ձեզ մնում է միայն բնականոն վարքագիծ դրսևորել: Ընդօրինակելով երեխան հեշտությամբ կտվորի քաղաքավարության կանոններն ու կդաստիարակվի ճիշտ այնպես, ինչպես Դուք էք ցանկանում:

Դժբախտությունն այն է, որ ծնողները սովորաբար ցանկանում են անմիջապես տեսնել արդյունքը: Երեխան մանկական ձևով է խոսում, իսկ մեծահասակները ցանկանում են, որ նա միանգամից աշխարհիկ գրույց վարի: Որոշ ծնողներ համոզված են՝ եթե հնարավորինս շուտ չսկսեն երեխաների մոտ բարեկիրթ շարժումներ ներմուծել, ապա հետագայում դա անհամեմատ ավելի դժվար կլինի: Բայց փորձը ցույց է տալիս, որ երեխային ինչ-որ բան սովորեցնելն ավելի հեշտ է այն ժամանակ, երբ նա դրան արդեն պատրաստ է: Կյանքի առաջին 2-3 տարիներին երեխայի անմիջականությունը դեռևս շատ մեծ է, իսկ հասարակական հետաքրքրությունները՝ չափազանց թույլ, որպեսզի նա քաղաքավարության կանոնները յուրացնելու թեկուզ աննշան խթաններ ունենա:

Ճիշտ է՝ համբերատար և բարեխիղճ ծնողները կարող են մի փոքր կրճատել այն ժամանակը, որն անհրաժեշտ է երեխային բացարձակ քաղաքավարի դարձնելու համար: Բայց նման դեպքում վտանգ կա, որ բարեկիրթ շարժումները նրա մեջ կձևավորվեն՝ ի հաշիվ մանկական անմիջականության և անադարտ զգացմունքների: Այդպիսի երեխան, անկասկած, շատ քաղաքավարի կլինի, բայց միաժամանակ ճնշված, կամազուրկ և ենթարկվող:

Մյուս վտանգը ծնողների մեջ է թաքնված: Բանն այն է, որ մեծահասակներից շատ քչերն են իրականում այնպես դաստիարակված, որ համապատասխանեն բարեկրթության մասին իրենց պատկերացումներին: Դժվար թե հանդիպենք այնպիսի մարդու, ով իրեն անդաստիարակ համարի: Օրինակ, որևէ պաշտոնական ընդունելության կամ ճաշկերույթի ժամանակ մեծերն իրենց անթերի են պահում, բայց տանը հողաթափերը հագնելուց հետո թուլանում են և հաճախ բոլոր մշակված

շարժումները մի կողմ թողնում: Մինչդեռ հենց տանն է պետք է օրինակելի լինել երեխաների համար: Չէ՞ որ հենց տանը, որտեղ փոքրիկներն իրենց անկաշկանդ ու ազատ են զգում, ծնողները նրանցից քաղաքավարություն են պահանջում: Իսկ երեխաները չեն հասկանում, թե ինչու պետք է տանը ինչ-որ բան փոխվի միայն նրա համար, որ հյուրեր են սպասվում: Այլ կերպ ասած՝ անիմաստ է կարծել, թե երեխաները կընդօրինակեն դաստիարակության լավագույն դրսևորումները, եթե տեսնեն, որ տան մեծերի իրական վարքի նորմերն այլ են: Ծնողներն, իրենց կամքից անկախ, երեխաներին միաժամանակ և՛ դաստիարակություն, և՛ անդաստիարակություն են սովորեցնում:

Կա ևս մի փաստ. շատ հաճախ ծնողներն իրենք են միանգամայն անքաղաքավարի վարվում երեխաների հետ: Արդյոք մի՞շտ են 3 տարեկան փոքրիկին «շնորհակալություն» և «խնդրեմ» ասում, արդյոք չէ՞ն ընդհատում, երբ նա խոսում է, և մի՞շտ են նրա ընկերներին այնպես դիմավորում ու ողջունում, ինչպես կցանկանային, որ նրանք դիմավորեին ու ողջունեին: Նրանց հետ նույն տոն՞վ են խոսում, ինչպես իրենց հյուրերի հետ:

Անկեղծորեն, մեծահասակներից շատերը դժվարությամբ են իրենց երեխայի հետ քաղաքավարի լինում: Չէ՞ որ նա այնքա՛ն փոքրիկ է, այնքա՛ն անքաղաքավարի, որ հաճախ ծնողներն են իջնում նրա աստիճանին և չեն կարողանում նրան բարձրացնել իրենց մակարդակին... Դժբախտաբար, դա երեխային անշնորհք վարքագիծ սովորեցնելու լավագույն միջոցն է:/

ԳԼՈՒԽ 1

Խորհուրդներ, որոնք կօգնեն ծնողներին և մանկավարժներին երեխաների մոտ բարեկիրթ վարվելաձևի հղկմանը

Ինչպես օգտվել դանակ եւ պատառաքաղից, ինչպես կապել կոշիկի կապիչները, ինչպես դիմել մեծահասակներին՝ երբեմն գիտակցված, երբեմն ինքնաբերաբար մենք սովորեցնում ենք երեխաներին վարվեցողության այս կամ այն կանոնները: Շատ օրենքներ մեզ համար պարտադիր են, շատերը թելադրվում են հասարակության կողմից եւ սոցիալական ճնշման հետեւանքով մենք ենթարկվում եւ ընդունում ենք դրանք: Սակայն ինչու, ինչպես եւ երբ սովորեցնել երեխաներին լինել քաղավարի՝ այս հարցերի շուրջ միշտ չէ, որ մտածում ենք:

Ստորեւ ներկայացնում ենք մի շարք վարվեցողության կանոններ, որոնք ձեր երեխաներին սովորեցնելով՝ դուք կդաստիարակեք ոչ միայն քաղաքավարի, այլև երջանիկ, առողջ, ինքնուրույն եւ պատասխանատու երեխաներ:

Բարևեր միմյանց

Բարեւ, բարի լույս, բարի օր, բարի երեկո, բարի գիշեր, ցտեսություն: Աշխատեք երեխաներին սովորեցնել բարեւել եւ հրաժեշտ տալ՝ դիմացինի աչքերի մեջ նայելով: Խուսափեք մեզանում կարծրացած օտարալեզու տարբերակներից: Փոքր տարիքի երեխաները շատ հաճախ ամաչում են անձանոթ մարդկանց բարեւել: Կարիք չկա նրանց ստիպելու, սակայն հետեւողականորեն առաջարկեք բարեւել եւ քաջալերեք նրանց սեփական օրինակի վրա. «Տես, մայրիկը բարեւում է ...-ին»: Ավելի մեծ տարիքի երեխաների մոտ ձեւավորեք սովորություն, որ անկախ նրանից, թե ինչով են զբաղված (հեռուստացույց դիտել, համակարգչով խաղալ, տնային աշխատանքներ կատարել եւ այլն), երբ ձեզ հյուր է գալիս կամ միանում է նոր մարդ, մոտենան եւ բարևեն: Մարդիկ սոցիալական էակներ են, եւ մեզ համար մեծ նշանակություն ունեն սոցիալական հարաբերությունները: Դիմացինին բարեւելով՝ մենք երեխաների մոտ սովորեցնում ենք նկատել, ուշադրություն դարձնել եւ ընդունել մյուսներին: Պատշաճ բարեւելու սովորությունը հասուն տարիքում մարդկանց դուր գալու եւ առողջ ինքնավստահություն ձեռք բերելու հիմնաքարն է:

Շնորհակալություն հայտներ

Սովորեցրեք երեխաներին տարբեր առիթներով տարբեր մարդկանց շնորհակալություն հայտնել՝ մայրիկին, հայրիկին, քույրիկին, մորաքույրին, անձանոթներին եւ այլն: Ճաշից հետո՝ համեղ կերակուր պատրաստելու համար, խաղի ժամանակ խաղալիքով կիսվելու, դասերի ժամանակ օգնելու, նվերներ ստանալու եւ այլն: Քաջալերեք երեխային ինքնուրույն հասկանալ, թե երբ եւ ինչու է անհրաժեշտ շնորհակալ լինել : :

Հետազոտությունները ցույց են տալիս, որ երախտագիտությունը նպաստում է երջանիկ լինելուն եւ ունի մի շարք առողջական եւ հոգեբանական առավելություններ (երախտագետ մարդիկ ավելի լավ են քնում, ավելի դիմացկուն են, դպրոցում իրենց ավելի լավ են զգում, ավելի գոհ են իրենց կյանքից եւ այլն):

Ներողություն խնդրեք եւ ներեք

Երեխաների մոտ դաստիարակեք հիմնավորված ներողություն խնդրելու, ինչպես նաեւ դիմացիին ներելու սովորություն: Բոլորս էլ ժամանակ առ ժամանակ անում ենք բաներ, որոնց համար այնքան էլ հպարտ չենք: Տվեք երեխային ժամանակ եւ հնարավորություն՝ իր սխալ արարքների կամ վարքի թերացումների համար ներում խնդրելու: Երբեք մի ստիպեք եւ գոռով մի պարտադրեք նրան ասել «կներես»: Ցույց տվեք, որ դուք ակնկալում եք զոջում՝ համբերատար սպասելով երեխայի գիտակցված ներողությանը: Հավասարապես կարելու է նաեւ սովորեցնել նրանց ներել դիմացիին:

Ներողամտությունը բերում է հասուն տարիքում ավելի ամուր եւ բավարարված հարաբերությունների, ավելի հեշտ սթրեսից ազատվելուն եւ այլն:

Սպասեք

Սովորեցրեք երեխանեին սպասել իրենց հերթին՝ լինի դա տանը, թե դրսում: Սովորեցրեք, որ երբ մեծահասակները խոսում են, անհրաժեշտ է սպասել, նոր միջամտել (եթե իհարկե արտահերթ բան չի պատահել): Եթե երեխան անհարկի միջամտում է, մի պատասխանեք նրան՝ ուղղակի կարճ, երեխայի աչքերի մեջ նայելով, հանգիստ տոնով ասեք, որ դուք այդ պահին զբաղված եք եւ հենց վերջացնեք, կլսեք նրան: Եթե երեխան նվեր է ստացել շոկոլադ, միասին պահեք, որպեսզի ուտեք ճաշից հետո: Եթե գնացել եք միասին գնումներ անելու, սպասեք հերթի մեջ: Եթե երեխան խաղալիք է նվեր ստացել, աշխատեք անմիջապես չբացել եւ խաղալ, եթե նա դեռ չի կատարել իրեն հանձնարարված պարտականությունները՝ լինի դա տնային աշխատանք, թե սենյակը հավաքել:

Սպասելը եւ հաճույքը/հատուցումը հետաձգելը բերում են հասուն տարիքում հաջողակ լինելու եւ աշխատասիրության:

Հավաքեք ձեր հետևից

Սկսեք շատ փոքր տարիքից: Նույնիսկ մինչեւ քայլել եւ խոսել սովորելը, երեխային սովորեցրեք հավաքել իր հետևից: Սկզբում երեխայի հետ միասին, այնուհետեւ թողեք նա ինքնուրուն հավաքի իր իրերը (խաղալիքներ, գրքեր, հագուստ եւ այլն)՝ ուտելուց, մեկ այլ բանով զբաղվելուց, բակ դուրս գալուց առաջ եւ այլն: Հաշվի առեք, որ փոքր երեխաները դանդաղ են հավաքում, այդ պատճառով հատկացրեք բավականաչափ ժամանակ: Ավելորդ եմ համարում նշել, որ եթե ցանկանում եք նմանտիպ վարքը ամրապնդել երեխայի մոտ, անհրաժեշտ է, որ ընտանիքի բոլոր անդամները հետեւեն այս կանոնին:

Մրանով երեխաների մոտ դաստիարակում եք կազմակերպվածություն եւ մաքրասիրություն, ինչպես նաեւ նրանց մոտ ձեւավորում եք սկսած գործը ավարտին հասցնելու սովորություն:

Թույլտվություն հարցրեք

Սովորեցրեք երեխային, թույլտվություն հարցնել ուրիշի իրերը կամ անձանոթ առարկաներ վերցնելուց առաջ: Սա ոչ միայն քաղաքավարության, այլեւ երեխայի անվտանգության պահպանման համար անհրաժեշտ կանոն է:

Պահպանեք օրենքները եւ հետևեք կանոններին

Հաճախակի խոսեք երեխաների հետ ընդունված օրենքների եւ կանոնների մասին: Բացատրեք, թե դրանք ինչի համար են ընդունված (անվտանգություն, հարգալից վերաբերմունք եւ այլն): Փողոցը անցեք դրա համար նախատեսված տեղում, հետեւեք լուսացույցին: Խուսափեք արգելված վայրերում ծխելուց: Մեքենայով երթեւեկելիս

երեխային կապեք ամրագոտիով: Աղբը նետեք աղբամանի մեջ: Տրանսպորտից օգտվելիս սպասեք, որ նախ մարդիկ դուրս գան, հետո նոր նստեք: Հիշեք, որ այսօր մենք դաստիարակում ենք վաղվա քաղաքացիներին:

Երեխան երբ ծնվում է, ընկալում է աշխարհը որպես քառու: Աստիճանաբար նա այդ քառուում սովորում է տեսնել օրինաչափություններ եւ իմաստ: Երեխային փոքրուց ծանոթացնելով օրենքին, դաստիարակելով նրա մոտ օրինապաշտություն եւ կարգապահություն, հարգանք օրենքի եւ հեղինակությունների նկատմամբ, մենք ոչ միայն նրանց ապագան ենք բարելավում, այլեւ կատարում ենք հանրօգուտ աշխատանք: Յուրաքանչյուրս իր ներդրումն ունի հասարակության ձեւավորման մեջ, եւ աշխատեք առօրյա կյանքում այս ամենը կիրառել ու երեխաների ուշադրությունը դարձնել դրա վրա:

Գլուխ 2

Մանկավարժական վարպետության բաղադրիչները բարեկիրթ վարվելաձևի ձեռքբերման համար

Նախադպրոցական հաստատության մանկավարժի համար կարևոր անձնային որակներ են մարդասիրությունը, բարությունը, մանկավարժական տակտը, համբերատարությունը, պատասխանատվությունը, լավատեսությունը, ապրումակցումն ու հուզական հավասարակշռվածությունը, ընկերասիրությունը, սկզբունքայնությունը և այլն: Այսպիսով, եթե ընդհանրապես ժամանակակից դաստիարակին ներկայացվող առաջնահերթ պահանջներից է մասնագիտական գիտելիքների և մանկավարժական կարողությունների առկայությունը, ապա առաջնային են նրա անձնային որակները, երեխաների նկատմամբ սերը, հաղորդակցական և համագործակցային կարողությունները:

Նախադպրոցական հաստատության մանկավարժի աշխատանքն առանձնահատուկ է իր նպատակով ու խնդիրներով, բովանդակությամբ, միջոցներով ու ձևերով: Նրա մանկավարժական գործունեության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է իր մանկավարժական վարպետությամբ, որն իր մեջ ներառում է

մասնագիտական գիտելիքների, կարողությունների, հմտությունների համակարգը,

◆մասնագիտական և անձնային որակները

◆մանկավարժական գործունեություն վարելու համար անհրաժեշտ ունակությունները

◆մանկավարժական հաղորդակցման կարողությունն ու խոսքի մշակույթը,

◆մանկավարժական տակտը և բարեկրթությունը

◆մանկավարժական տեխնիկան

◆մանկավարժական իմիջը

◆մանկավարժական անդրադարձը (ռեֆլեքսիան):

Բախվելով տարբեր խնդրահարույց իրավիճակների՝ գալիս ենք այն համոզմանը ,որ պատիժը դաստիարակության մեջ ծայրահեղ միջոց է եւ ամեն կերպ պետք է խուսափել դրանից: Ինչքան քիչ առնչվեք այնպիսի դեպքերի հետ, երբ հարկ կա պատժել երեխային, այնքան ձեր եւ երեխայի օգուտն է :

Բարեկրթությունը նաև անհատի խաղաղ հոգեվիճակն է , իսկ հակառակ դեպքում ծնվում է ագրեսիա,որը տիրապետել անհնարե;Հետևեք արտահայտությունների ,որոնք պետք է հաճախ օգտագործել:

«Ապրես, անմիջապես երեւում է, թե որքան ջանք ես գործադրել»

Երբ երեխաներին գովում ենք, հաճախ կենտրոնանում ենք նրանց խելքի ու հնարամտության վրա՝ «Ապրես, ինչ սիրուն ես նկարել», «Շատ խելոք ես, կարողացար գտնել գլուխկոտրուկի պատասխանը» եւ այլն: Այնինչ բնածին ընդունակությունները գովելն անօգուտ է, եւ երեխայի մեջ ձեւավորում է սխալ պատկերացում իր հնարավորությունների մասին:

Անհրաժեշտ է երեխայի մեջ աշխատասիրություն եւ ջանասիրություն դաստիարակել: Այդ պատճառով գովելիս պիտի շեշտենք երեխայի թափած ջանքը՝ «Երեւում է, թե ինչքան ես աշխատել այս մասի վրա, գեղեցիկ է ստացվել»: «Տեսնում եմ, թե ինչ համառորեն ես աշխատել/ինչ ջանասիրաբար ես փորձում լուծումներ գտնել» եւ այլն:

Իհարկե, սա կարելի է օգտագործել միմիայն այն դեպքում, երբ երեխան իսկապես ջանք է թափել: Հենց այնպես արված աշխատանքի համար նման արտահայտություններ շոայլելը կունենա հակառակ արդյունք: Մրանով մենք երեխային սովորեցնում ենք, որ արդյունքի հասնելու համար պետք է ջանասիրաբար աշխատել եւ ձեւավորում ենք նրանց մեջ աշխատասիրություն ու գործի նկատմամբ պատասխանատվության զգացում:

«Ինձ դուր չի գալիս, երբ դու գոռում ես: Փորձիր նույն բանն ասել հանգիստ տոնով»

Երբ երեխան բղավում է, գոռում կամ բարկանում, մենք շատ հաճախ ինքներս էլ ենք սկսում նրա հետ հավասար, եւ երբեմն նույնիսկ ավելի բարձր բղավել ու գոռալ, կամ էլ տեղի ենք տալիս, նեղանում եւ արձագանքում ոչ կառուցողական կերպով: Երեխաների հուզական ցանկացած արտահայտության ժամանակ մեծահասակը պետք է պահպանի հանգստությունը եւ խոսելով առաջին դեմքից՝ ասի, թե ինչպիսի վարք է ակնկալում երեխայից. «Ես գիտեմ, որ դու նույն բանը կարող ես ասել հանգիստ տոնով, հապա նորից փորձիր», «Ինձ դուր չի գալիս, ինչպես ես ինձ հետ խոսում: Եթե դու բարկացած ես, փորձիր նույն բանը այլ կերպ ասել, վստահ եմ, որ կարող ես», «Երբ հաջորդ անգամ այդպես բարկացած լինես, խնդրում եմ մի պահ առանձնացիր, հաղթահարիր բարկությունդ ու հետո նոր արի ինձ հետ զրուցելու»: Այսպիսով մենք երեխային սովորեցնում ենք, որ բարկությունը կամ բացասական այլ հույզեր ունենալն ընդունելի է, սակայն կարելու է դրանք կառավարելը եւ դիմացինի համար ընդունելի տարբերակով արտահայտելը: Բացի այդ, պահպանելով մեր հանգստությունը՝ օրինակ ենք ծառայում, որպեսզի երեխան էլ սթրեսային իրավիճակներում իրեն այդպես պահի:

«Մի րոպե հանգստանաւ/շունչ քաշեմ, հետո նոր զրուցենք»

Երբ բարկության զոհը մենք ենք եւ չենք կարողանում կառավարել մեր հույզերը, ցանկալի է իրավիճակից դուրս գալու համար ընդմիջում անել, խոր շունչ քաշել, 1-2 րոպե սպասել, հետո նոր վերադառնալ երեխայի հետ շփման եզրեր գտնելուն: «Ինձ համար կարելու է, որ մենք միմյանց հետ հարգալից խոսենք: Ու հիմա ես

դժվարանում եմ, քանի որ շատ տխրել/բարկացել եմ քո արարքից: Հիմա մի բուսե ինքս ինձ տիրապետեմ ու կշարունակենք»:

«Ինձ թվում է երկուսս էլ հանդարտվելու կարիք ունենք, արի 5 բուսե դադար տանք, խոր շունչ քաշենք ու նորից փորձենք»:

Եթե արդեն գոռգոռացել եք, կարելու է իրավիճակից արժանապատվորեն դուրս գալ.

«Ես շատ ցավում եմ, որ բղավել եմ քեզ վրա: Մենք պիտի իրար հետ մարդավարի խոսենք: Փաստորեն, ես ինձ վրա աշխատելու կարիք ունեմ: Համենայն դեպս, դա ոչինչ չի փոխում, ինձ համար կարելու է, որ դու հասկանաս, թե ինչու եմ ես բարկացել/տխրել քո արարքից»:

Ավելորդ եմ համարում նշել, որ անհրաժեշտ է իսկապես աշխատել եւ հաջորդ անգամ նման իրավիճակում կառավարել զայրույթը:

Այսպիսով մենք սովորեցնում ենք երեխային, որ այո, մենք էլ մարդ ենք ու կարող ենք սխալվել, սակայն պիտի կարողանանք գիտակցել մեր արարքի սխալ լինելը, պատասխանատվություն կրել մեր ասածների կամ արածների համար եւ աշխատել դրանք շտկելու ուղղությամբ:

Հավատացեք, մի քանի անգամ նման պատասխան տալով՝ մենք էլ այլեւս ցանկություն չենք ունենա երեխաների վրա բղավելու:

«Ես էլ շատ կցանկանայի, որ...»

Մթերային խանութում երեխան կոնֆետ է ուզում, իսկ մենք չգիտենք ինչպես մերժել, արդեն շատ է կերել: Խաղալիքների խանութում նվեր ենք գնում, իսկ նա ուզում է ինչ-որ բան, որ շատ ավելի թանկ է, քան տվյալ պահին մեր բյուջեն: «Թանկ է, չեմ առնի», «Կոնֆետը աղբ է, չեմ առնի»-ի փոխարեն կարող եք երեխային ասել՝ «Ես էլ շատ կցանկանայի, որ այդ խաղալիքը գնելու համար այսօրվա բյուջեն բավարարեր (այո, այո, մի՛ վախեցեք թեկուզ ամենափոքրիկների հետ օգտագործել բյուջե բառը, թող փոքրուց սովորեն): «Ես շատ կցանկանայի, որ դու այսօր արդեն այդքան շատ կոնֆետ կերած չլիներ, որ կարողանայիր հիմա այս մի կոնֆետն էլ ուտել»:

Դրանով, իհարկե մենք երեխայի ցանկությունը չենք բավարարում, եւ միգուցե նրա լացը/կամակորոթությունը չենք դադարեցնում, բայց ոչ պակաս կարելու է քան ենք

անում՝ ցույց ենք տալիս երեխային, որ մենք հասկացել/ընդունել ենք իր կարիքը/ցանկությունը կամ նախասիրությունը: Ուղղակի դրա իրագործելը տվյալ պահին նպատակահարմար չէ կամ վեր է մեր ուժերից: Դե, իսկ եթե երեխան շարունակում է բացասական վարք ցուցաբերել, արդեն գիտենք ինչպես շարունակել:

«Արի ինձ հետ, կօգնեմ/ցույց կտամ...»

Երեխան վազում է փողոցին շատ մոտ, արգելում ենք: Նկարում է տան պատերին՝ բարկանում ենք: Տանը քնած մարդ կա, իսկ երեխան աղմկում է՝ վրդովվում ենք: Նման իրավիճակներում կարելի է արձագանքել այլ կերպ՝ օրինակ «Արի՛ ինձ հետ, ցույց տամ, որտեղ է կարելի վազել/նկարել/խաղալ/աղմկել» եւ այլն:

Սրանով մենք ոչ թե սոսկ արգելում ենք, այլ գծում ենք տվյալ գործողությունն անելու կամ չանելու ավելի նուրբ սահմաններ: Երբ երեխային ասում ենք «Մի՛ վազիր», արժեզրկում ենք վազելն առհասարակ, իսկ երբ ցույց ենք տալիս, թե ինչպես, երբ եւ որտեղ վազել, սովորեցնում ենք վազել ապահով պայմաններում: Մի քանի անգամ այսպես վարվելուց հետո ձեր երեխան ինքն արդեն կգա ձեզ մոտ՝ ինչ-որ բան անելու համար խորհուրդ հարցնելու, քանի որ գիտի, որ իրեն ոչ թե արգելելու, այլ ուղղորդելու են՝ թե ինչպես անել, որ արածն ընդունելի լինի:

«Դու դա ԴԵՌ չես կարող անել, շուտով կկարողանաս»

Երեխային խնդրում ենք, որ մեզ համար օրինակ մի կապիկ նկարի, իսկ նա պատասխանում է՝ «Չեմ կարող»: Մաթեմատիկայից խնդիր ենք տալիս, ասում է՝ «Ես դա չեմ կարող լուծել»: Հարց ենք տալիս, իսկ նա՝ «Չգիտեմ»: Անկախ քեզանից ուզում ես ասել՝ «Ոչ, կարող ես, հենց նոր դրանից լուծեցիր/երեկ իրար հետ փորձեցինք, ստացվեց» եւ այլն, քանի որ համոզված ենք, որ նա կարող է, պիտի միայն փորձի կամ մի քիչ մտածի: Սակայն մեր «ՈՉ»-ը իր մեջ երկու թակարդ է պարունակում, նախ՝ մենք գնում ենք բաց առճակատման՝ արհամարհելով երեխայի կարծիքն ու ցույց տալով, որ իրենից լավ գիտենք, թե ինչ կարող է ինքն անել, եւ ինչը՝ ոչ: Երկրորդ՝ պնդում ենք, որ նա սխալ է գնահատում իր կարողության սահմանները: Բայց հերիք է մի փոքր փոփոխենք այս նախադասությունը եւ մենք երեխային նոր հարթության վրա

կրթարձրացնենք՝ «Դու դա **դեռ** չես կարող անել, շուտով կկարողանաս»:

ԴԵՌ-ով մենք երեխային ցույց ենք տալիս, որ ընդունել ենք նրա ընտրած սահմանները, բայց դրա հետ մեկտեղ ուղղորդում ենք նրան դեպի զարգացում: «Հիմա չես կարող, շուտով կկարողանաս»-ը մղում է երեխային մեծահասակի հետ մտնել երկխոսության մեջ եւ միասին ելքեր փնտրել:

«Դու դա ԴԵՌ չես կարող անել, միասին աշխատենք, որ կարողանաս»: «Ինչե՞ր ես մինչեւ հիմա փորձել, արի հասկանանք, ինչումն է բանը», «Արի մի քանի անգամ փորձենք, մինչեւ վարժվենք/տեսնենք՝ ինչ է ստացվում»: Այս մոտեցումը ձեւավորում է երեխայի մեջ մի շատ կարեւոր դիրքորոշում՝ եթե ուզածին չի հասել, ուրեմն ԴԵՌ բավարար չափով ջանք չի թափել կամ ԴԵՌ չի գտել ճիշտ ուղին, պիտի միայն շարունակի աշխատել եւ կստացվի:

Մի փոքր ճիգ, մի քանի անգամ կաշկանդվելով ասված խոսքեր եւ այս արտահայտությունները կդառնան անառոյա խոսելաճի մաս եւ ինքներդ էլ չեք նկատի, թե ինչպես շատ հարցերում թե՛ ձեր, թե՛ երեխայի վերաբերմունքը կփոխվի դեպի լավը:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ

Հարկ է նշել, որ երեխայի մոտ բարեկիրթ վարվելաձևի խթանման գործում շատ մեծ դերակատարություն ունի մանկավարժը և նրա կողմից ընտրված ուսուցման մեթոդները, որոնք ոչ միայն ուղղված են ուսումնական նյութը մատուցելուն, այլև երեխայի մոտ դրա հանդեպ մեծ հետաքրքրություն առաջացնելուն, երեխայի ուշադրությունը կենտրոնացնելուն, նրանց մեջ աշխատասիրություն և կարգապահություն սերմանելուն:

Ուսումնասիրելով վերը նշված մեթոդներ և խորհուրդները՝ որպես մանկավարժական գործիք ընտրել եմ Խաղային մեթոդը՝ կիրառելով բազում դիդակտիկ նյութեր՝ տեսանյութ, մուլտֆիլմ, պաստառ, իրավիճակային տեսարաններ:

Խաղային տեխնոլոգիաների կիրառումը ունի ուսումնադաստիարակչական նշանակություն: Խաղը դիտարկվում է որպես առաջատար գործունեություն ոչ այն

պատճառով, որ այն երեխայի կյանքում մեծ տեղ է գրավում, այլ որովհետև խաղի ընթացքում երեխայի հոգեկանում տեղի են ունենում գլխավոր փոփոխությունները՝ զարգանում են այն գործընթացները, որոնք անհրաժեշտ են զարգացման նոր առավել բարձր աստիճանների հասնելու համար: Խաղալով երեխան անընդհատ ձգտում է գնալ առաջ, նրա մոտ միաժամանակ աշխատում են ենթագիտակցությունը, ինտելեկտը և երևակայությունը, հետևաբար երեխաների զգացմունքային ոլորտի զարգացումը, ինչպես նաև մտավոր կարողությունների զարգացումն ավելի արդյունավետ կատարում են խաղի մեջ:


Խաղային գործունեությունը հետաքրքիր է երեխաներին և կարող է առաջացնել նորի ճանաչման դրական շարժառիթ: Միաժամանակ խաղը հանդիսանում է ոչ միայն զվարճալի միջոց, այլ նաև սովորական վարժություն, որը զգեստավորվել է հետաքրքիր ձևով: Խաղի բովանդակությունը ծառայում է ուսումնական խնդրի կատարմանը, որտեղ կարևոր է նաև դաստիարակչական կողմը: Հարկ է նշել, որ խաղը կարելի է դիտարկել և՛ որպես ուսուցման խաղային մեթոդ, և՛ որպես ուսուցման ձև, և՛ որպես երեխայի անձի զարգացման միջոց: Այն պետք է դիտել որպես ուսումնական գործընթացի կազմակերպման ձև:

Պարապունքի ժամանակ խաղային գործունեությունն իրականացվում է հետևյալ քայլերով՝

- երեխայի առջև խաղի տեսքով դրվում է դիդակտիկական որոշակի նպատակ,
- ուսումնական գործունեությունը ենթարկվում է խաղի կանոններին,
- ուսումնական նյութն օգտագործվում է որպես խաղի միջոց:

Ուսուցման խաղային մեթոդը խաղ չէ բառի բուն իմաստով: Այն ավելի շուտ հանձնարարություն է, որն ունի դիդակտիկական, ճանաչողական նշանակություն, ուսուցման գործընթացին խաղային ձև տալն ուղեկցվում է խաղի մեկ կամ մի քանի տարրեր ներմուծելու ճանապարհով, խաղային սյուժե, բովանդակություն, դերեր, որոշակի կանոնների կատարման միջոցով նպատակին հասնելու արդունք և այլն:

Շատ արդյունավետ են **իրավիճային նկար-քարտերի** կիրառումը, որտեղ ելնելով իրավիճակից երեխան պետք է ինքնուրույն որոշումներ կայացնի , թե ինչպես ինքը կվարվեր նկարում եղած հերոսի փոխարեն :



Հետազոտության արդյունքները

55% Երեխաների մոտ դիտարկվեց ինքնուրույնության դրսևորման բարդույթ, ինքնուրույն խոսքի դժվարություններ :

40% Երեխաների մոտ դիտարկվեց մասնակի կազմակերպվածություն, իրավիճակի ինքնուրույն գնահատման դժվարություններ , մասնակի որոշում կայացնելու հմտություն:

5% Երեխաների մոտ դիտարկվեց բարեկիրթ վարվելաձևի առկայություն, կարգապահություն, ինքնավստահություն, կազմակերպված խոսք , իրավիրճակի ճիշտ գնահատում և լուծում , էթիկայի նորմերի գերազանց իմացություն:

Եզրակացություն

Բարեկիրթ շարժումներ երեխային պետք է սովորեցնել տանը, մանկապարտեզում և դպրոցում , ոչ թե բակում: Նման ուսուցողական գործընթացները կարելի է խաղերի վերածել:

/Երեխային բարեկիրթ շարժումներ սովորեցրեք անուղղակիորեն, աննկատելիորեն, առանց շտապելու և գորգոռալու, համբերատարությամբ. այլ կերպ ասած՝ դաստիարակությունը երեխայի համար լուրջ դասի մի՛ վերածեք:

/Եթե Ձեր երեխան մոռանում է շնորհակալություն հայտնել կամ բարևել, դա արեք իր փոխարեն և մի՛ պնդեք, որ նա անպայման կրկնի: Չէ՞ որ Դուք ձգտում եք միայն ցույց տալ, թե նման դեպքում ինչպես պետք է վարվել:

/ Թող երեխան տեսնի, որ Դուք սիրում եք հանդիպել մարդկանց: Ցանկալի է, որ Ձեր բարեկամներին հանդիպելիս ուրախ լինեք:

/ Բոլոր երեխաների հետ քաղաքավարի եղեք , նրանց վերաբերվեք որպես անհատի :

/Այն ամենն, ինչ անելու եք Ձեր երեխաների հետ լավագույն փոխհարաբերություններ հաստատելու համար, կօգնի նրանց բարեկիրթ շարժումն ձեռք բերել: Չէ՞ որ երեխան ձգտում է դուր գալ Ձեզ և, ամենակարևորը, նա ջանալու է իրեն պահել Ձեզ նման:

/ Եվ վերջապես, մի՛ հուսահատվեք. Ձեր երեխան կարող է սարսափելի անշնորհք ու կոպիտ լինել 3 տարեկանում, չափազանց քաղաքավարի՝ 5 տարեկանում, և կրկին շատ անդաստիարակ՝ 6 տարեկանում: Նրա կարծիքով, ինքն անթիվ պատճառներ ունի՝ ժամանակ առ ժամանակ բարեկիրթ վարվելաձևի կանոններն անտեսելու համար: Բայց երեխայի վարքը գրեթե միշտ կլինի այնպիսին, ինչպիսին եղել է նրա զարգացման լավագույն, ոչ թե վատագույն շրջանում: Կարևորը մեծ սեր ներդնել այս բարդ ու պատասխանատու գործում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Божович, Л. И., Проблема развития мотивационной сферы ребенка. - М.: Педагогика, 1972
2. Маркова А.К., Матис Т.А., Орлов А.Б. Формирование мотивации учения. – М.: Просвещение, 1990
3. Матюхина М.В. этика- учения младших дошкольников. – М.: Педагогика, 1984
4. Маслоу А.Этика и личность. – СПб.: 2006
5. Леонтьев, А. Н., Потребности, мотивы и эмоции. - М.: Изд-во МГУ, 1971
6. Леонтьев А.Н., Педагогическое общение.- Москва, 1999, стр. 28-35.
7. Նյուրը՝ Ալան Ֆրոյդի "Այբուբեն ծնողների համար" գրքից
8. Հակոբյան Գ.Հ., Մանկավարժական պրակտիկայի ընթաց-քում ուսանողների մասնագիտական կոմպետենտություն-ների ձևավորման տեսականմեթոդաբանակլան հարցեր: Մանկավարժական միտք, 2013, հմ. 1-2, էջ 63-67: